

**

Պ. Մեղաւորեան մանկավարժական սրահ մը հաստատեց, ուր պիտի երթան մանկավարժներն եւ ուսուցման եղանակներուն վրայ պիտի խօսին:

Լաւ կը լինէր, եթէ պ. Սպանդարեան խօսէր ուսուցման այն եղանակի վրայ, որով աշակերտ մը չկարողանար ոչինչ ուսանիլ:

Այս եղանակը գտնուելուն պէս՝ միւս եղանակները փնտռելու հարկ չմնար:

Լէվանթ - Հերալտ - ի Տնօրէն՝ Տպագրական Տեսչութեան ներկայացաւ իւր խափանեալ թերթին նորէն հրատարակման հրամանն ուզելու:

Տեսուչը քնանալու գնացած էր:

4 Յունիս

Լրագիրները մեծ գովեստով խօսած էին Ս. Պատրիարքին երկու արձաններուն վրայ, զորս երկու ազգային գեղարուեստագէտ երիտասարդներ շինելով, ի տես հասարակութեան դրած են Ապտուլլահ եղբայրներու գործարանը:

Հետաքրքրութեան համար այսօր գնացի այդ արձանները տեսայ եւ բարկացայ, վասնզի լրագիրներէ խաբուած ըլլալս անմիջապէս զգացի:

Այս արձաններէն մին, որ Իտալիա ուսում առած երիտասարդի մը գործն է՝ բնաւ չնմանիր Պատրիարքին. Նորին Սրբազնութեան եղբայրներուն ալ չնմանիր:

Չկրցի համբերել, մօտեցայ արձանին եւ անոր ականջն ի վար փսփսացի.

Պարոն արձան, զուարթերես

Համակրական եւ աղուոր ես.

Այլ ի՛նչ օգուտ, չունիս լեզու,

Որ ըսէիր ինձ ո՛վ ես դու:

Միւսն, որ հոս ինքնիրմէ ուսած երիտասարդի մը *զլուխ գործոցն* է՝ քիչ մը արձանի իսկականին նմանութիւնը կը բերէ թեպէտեւ, բայց այնչափ տձեւ կերպով շինուած է որ,

Թէ լրագիր մ'այսպէս գրծէր

Պատրիարքին ներքին պատկեր՝